ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Անահիտ Միքայելյան՝ «Ս. Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն
2. **Գործուղման վայրը և ժամկետները**
   - Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Լոնդոն
   - 2026 թվականի մայիսի 17-20
3. **Հրավիրող կողմը**
   Նախաձեռնողներ՝
   - «Ս. Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ
   - Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանություն
   - Լոնդոնում հայկական ֆիլմերի կինոփառատոնի համահիմնադիրներ
   - Անկախ կուրատորներ
4. **Գործուղման նպատակը**
   Գործուղման նպատակն էր քննարկել Փարաջանովի թանգարանի և բրիտանական թանգարանների և պատկերասրահների միջև համագործակցության հնարավորությունները, նաև նախապատրաստական աշխատանքներ իրականացնել Լոնդոնում նախատեսվող ֆոտո և թվային ցուցահանդեսի ու դասախոսությունների կազմակերպման ուղղությամբ, որոնք հիմք կհանդիսանան 2028 թվականին Սերգեյ Փարաջանովի արվեստի ստեղծագործությունների ցուցահանդեսի կազմակերպման համար:
5. **Քննարկված թեմաները**
   - Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանի և Լոնդոնում հայկական ֆիլմերի կինոփառատոնի համահիմնադիրների հետ քննարկվել են սույն թվականի դեկտեմբերին հայկական ֆիլմերի փառատոնի շրջանակում Լոնդոնում ժամանակակից արվեստի ինստիտուտում ֆոտո և թվային ցուցահանդեսի և դասախոսությունների կազմակերպումը:
   - 2027-2028 թվականներին Լոնդոնում Սերգեյ Փարաջանովի արվեստի ստեղծագործությունների ցուցադրության կազմակերպման հնարավոր տարբերակներ, ցուցադրության կոնցեպտի վերաբերյալ հարցեր
6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

22.05.2026

Գործուղման ընթացքում հանդիպում է կայացել՝

- Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանի հետ, որի ընթացքում քննարկվել են հետագա համագործակցության տարբերակները և առաջիկա ծրագրերը:
- Լոնդոնում հայկական ֆիլմերի կինոփառատոնի համահիմնադիր Կիրա Ադիբեկովի,
- անկախ համադրող Բելլա Կեսոյանի,
- «Mimosa House» արվեստի տնօրեն Դարիա Հանի հետ և
- այցելություն «Messums London»:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են համատեղ ցուցադրությունների իրականացման, ցուցահանդեսների կազմակերպման և համագործակցության զարգացման տարբեր գաղափարներ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Կողմերի միջև ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ՝

- Լոնդոնում ֆոտո և թվային ցուցահանդես կազմակերպելու,
- Դասախոսություններ իրականացնելու,
- հետագա համատեղ ցուցադրություններ մշակելու վերաբերյալ:

Ստորագրված փաստաթղթեր չեն եղել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Առաջարկվում է՝

- շարունակել բանակցությունները բրիտանական թանգարանների և պատկերասրահների հետ,
- մշակել 2028 թվականի ցուցահանդեսի կազմակերպման գործողությունների ծրագիր:

Պատասխանատու՝ «Ս. Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ:

Ժամկետ՝ 2026-2028 թվականներ:

Ակնկալվող արդյունք՝ Սերգեյ Փարաջանովի արվեստի միջազգային ճանաչելիության բարձրացում և երկարաժամկետ համագործակցության զարգացում:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

22.05.2026